Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցուպատմություն» առարկայի
մարզային փուլ
10–րդ դասարան - 120 բոպե
№ 1– 8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Նիկիայի տիեզերական ժողովն ընդունեց եկեղեցու կյանքը կարգավորող՝

1) 12 կանոն *(0,5 միավոր)*
2) 20 կանոն
3) 25 կանոն
4) 30 կանոն

2. Քանի՞ գրքից է բաղկացած Հին Կտակարանը. *(0,5 միավոր)*

1) 40 գրքից
2) 27 գրքից
3) 48 գրքից
4) 4 գրքից

3. Ղպտի եկեղեցին պատկանում է քրիստոնեական եկեղեցու հետևյալ հիմնական ուղղությանը. *(0.5 միավոր)*

1) Օրթոդոքս
2) Բողոքական
3) Արևելյան ուղղափառ
4) Կաթոլիկ

4. Հայոց հայրապետական գահին ո՞վ հաջորդեց Ս. Գրիգոր Լուսավորչին. *(0.5 միավոր)*

1) Ս. Արիստակես Ա
2) Ս. Հուսիկ Ա
3) Ս. Վրթանես Ա
4) Ս. Ներսես Ա

5. Ե՞րբ գումարվեց Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը. *(0.5 միավոր)*

1) 1165 թ.
2) 1173 թ.
3) 1178 թ.
4) 1193 թ.

6. 1441 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց. *(0.5 միավոր)*

1) Հովհաննես Հերմոնեցին
2) Կիրակոս Վիրապեցին
3) Թովմա Մեծոփեցին
4) Գրիգոր Մուսաբեկյանը

7. Արմաշի դպրեվանքի հիմնադրման ժամանակ Կ.Պոլսի Հայոց պատրիարքն էր.

1) Խորեն Աշըգյանը *(0.5 միավոր)*
2) Ներսես Վարժապետյանը
3) Մաղաքիա Օրմանյանը
4) Մկրտիչ Խրիմյանը

8. Վրաստանի հայոց թեմի գործունեությունը դադարեցվեց. *(0.5 միավոր)*

1) 1925 թ.
2) 1927 թ.
3) 1931 թ.
4) 1936 թ.

№ 9 – 12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Ո՞վ էր Երևանի փոխթեմակալը, որը մշտապես ներկա էր լինում Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության նիստերին և դիվանագիտական ընդունելություններին. *(1 միավոր)*

---

10. Ի՞նչ անունով է կոչվել Ոսկյանց քարոզների շնորհիվ քրիստոնեություն ընդունած հայ ազնվականների փոքրիկ խումբը, որը հեռացել էր թագավորի պալատից և բնակություն հաստատել լեռներում. *(1 միավոր)*

---

11. Ո՞ր վանքի վանահայրն էր Հայոց կաթողիկոս ձեռնադրված Մաշտոց Եղիվարդեցին: *(1 միավոր)*

---

12. Տասը պատվիրաններից քանիսի՞ մեջ են բացատրվում Աստծո հանդեպ մարդու պարտականությունները և անելիքները: *(1 միավոր)*

№ 13 – 14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Համապատասխանեցնել իրադարձությունը և դրան առնչվող հայոց կաթողիկոսի անունը: *(1 միավոր)*

1) Սինոդի կամ կառավարիչ Ս. Ժողովի հիմնումը

2) Գանձասարի կաթողիկոսական աթոռի լուծարումը
3) Հայոց եկեղեցու կանոնադրության լրամշակումը
4) Կենտրոնական պատգամավորական ժողովի բացումը Էջմիածնում

ա) Եփրեմ Ա Զորագեղցի
բ) Դանիել Ա Սուրմառեցի
գ) Ներսես Ե Աշտարակեցի
դ) Հովհաննես Ը Կարբեցի
ե) Մկրտիչ Ա Խրիմյան

1	
2	
3	
4	

14. Հայոց կաթողիկոսների գահակալման տարեթվերը համապատասխանեցնել նրանց անուններին. *(1 միավոր)*

1) Հովհաննես Գ Օձնեցի
2) Ներսես Բ Բագրևանդցի
3) Մովսես Բ Եղիվարդեցի
4) Գյուտ Ա Արահեզացի

ա) 461–478 թթ.
բ) 574-604 թթ.
գ) 548–557 թթ.
դ) 630-641 թթ.
ե) 717-728 թթ.

1	
2	
3	
4	

№ 15 – 17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Զինվորական քահանան պարտավոր է զնդապետի որոշած ազատ ժամերին դասախոսել զինվորներին Ս. Գրքից և ազգային-եկեղեցական պատմությունից՝ վառ պահելով նրանց մեջ պարտքի գիտակցությունը և սերը դեպի ազգը և ազգային սրբությունները»:

Ե՞րբ է Ամենայն Հայոց կաթողիկոսը հաստատել մի քանի կետերից բաղկացած հրահանգը, որից և մեջբերված է վերոհիշյալ հատվածը: *(1 միավոր)*

---

16. «Տունը և ընտանիքը մի փոքրիկ թագավորության երկիրն ու սահմանն են, որի նահապետական աթոռին նստում են ծնողները: Հայրն իբրև թագավոր և մայրն իբրև թագուհի կառավարում են ընտանիքը: Սույն ընտանեկան պալատի ու թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ գավազան, այլ այդ բոլորի տեղ հայրական սերն ու մայրական գորովն է»:

Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը: *(1 միավոր)*

---

17. ***« ...արքայի սրից խաչ են պատրաստում, որի վրա գրում են. «Սպանման գործի արքայական այս զենքը Կյանքի Արքայի՝ Քրիստոսի խաչին նվիրյալ լինի, որով մեզ փրկեց հավիտենական մահից»»:***

1) Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը: *(1 միավոր)*

---

2) Հայոց ո՞ր թագավորի մասին է մեջբերված ավանդությունը: *(1 միավոր)*

№ 18 – 19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Թվարկված հոգևորականներից ո՞ր երկուսն են 1918 թ. մայիսին մեկնել ռազմաճակատ: *(1 x 2 = 2 միավոր)*

1) Գևորգ վարդապետ Նալբանդյան
2) Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան
3) Ներսես եպիսկոպոս Խարախանյան
4) Վարդան վարդապետ Հակոբյան
5) Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայան
6) Բագրատ վարդապետ Թավաքալյան

19. Նշել երկու սխալ պնդումները. *(1 X 2 = 2 միավոր)*

1) Նախաձեռնելով 1906 թ. պատգամավորական կենտրոնական ժողովի հրավիրումը՝ Մկրտիչ Ա Խրիմյանը փորձում էր ապահովել հասարակության լայն շրջանակների մասնակցությունը կրոնական գործերին և հոգևոր կյանքին:

2) Ժողովուրդն իրավունք էր ստանում իր ներկայացուցիչների միջոցով մասնակցելու ոչ միայն կաթողիկոսական ու քահանայական, այլև թեմական առաջնորդների, հոգևոր-վարչական կառույցների ընտրություններին՝ ընդհանուր և անմիջական քվեարկությամբ:

3) Մի շարք թեմերի հոգևոր առաջնորդներ, ընդդիմանալով ժողովում քաղաքական հարցերի քննարկմանը, ներկայացրեցին իրենց հրաժարականը:

4) Ժողովին մասնակցող հայ քաղաքական ուժերի ներկայացուցիչների կողմից փորձ արվեց քննարկման առարկա դարձնել նաև քաղաքական հարցեր:

5) 1906 թ. օգոստոսի 15-ին, հիմք ընդունելով ժողովում հնչած հակացարական ելույթները, ոստիկանությունը ցրեց այն:

№ 20

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել և գնահատել Հայոց եկեղեցու մասնակցությունը Մայիսյան հերոսամարտերին (1918թ.):